



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2014 թ.

N 2-2014/01

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.4 կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 23.04.2014թ. նիստի 2-2014 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. 2014թ. հունիսի 2-ին, ժամը 11:00-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 26 հասցեում գումարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:
2. Բաժնետերերի գրանցման ամսաթիվ և ժամ սահմանել 2014թ. հունիսի 2-ին ժամը 10:00, իսկ վայր՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 26:
3. Բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2014թ. ապրիլի 23-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
4. Հաստատել «ԱՐՑԱՆ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի օրակարգը՝ ընդգրկելով հետևյալ հարցերը.
 1. Տարեկան հաշվետվությունների ներկայացում
 2. 2013թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ Աուդիտորի եզրակացության ներկայացում
 3. Ընկերության 2014թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության հաստատում
 4. Տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը
 5. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատում
6. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2013 թվականի գործունեության արդյունքներով շահույթի համամասնությունները հաստատելու մասին
7. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2013 թվականի գործունեության արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում և տարեկան շահութաբաժինների չափի հաստատում
8. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի ընտրություն

5. Բաժնետերերի տարեկան ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցել էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ծանուցումը տրամադրել առձեռն կամ փոստով:
6. Հաստատել քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը՝ համաձայն հավելվածի:
7. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը լրացված քվեաթերթիկները կարող են ուղարկել (ներկայացնել) ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա հասցեով՝ մինչև 2014 թվականի հունիսի 2-ը, ժամը 16:00-ն:
8. Հանձնարարել Ընկերության գլխավոր տնօրենին ապահովել սույն որոշմամբ նախատեսված աշխատաքների իրականացումը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի ապրիլի 23-ից:

Խորհրդի նախագահ՝

Ս. Թևոսյան